Հավելված N1
Հայաստանի Հանրապետության
պետական եկամուտների կոմիտեի նախագահի
2020 թվականի ապրիլի 17-ի
N 337-Ն հրամանի

Օրինակելի ձև

ՀԻՄՆԱԴՐԱՄՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՀՐԱՊԱՐԱԿՎՈՂ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ
ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
Հիմնադրամի հոգաբարձուների
խորհրդի 31-03-2020 թ. որոշմամբ
««ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՍՏԱԲԱՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՀԻՄՆԱԴՐԱՄ»
Հ Ա Շ Վ Ե Տ Վ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն
հիմնադրամի 2019 թ. գործունեության մասին

1. Հիմնադրամի՝		
1.1 Լրիվ անվանումը		«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՍՏԱԲԱՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՀԻՄՆԱԴՐԱՄ
1.2 Գտնվելու վայրը		ԵՐԵՎԱՆ ԿԵՆՏՐՈՆ ԿԵՆՏՐՈՆ ԹԱՂԱՄԱՍ Զաքիյան փող., 7-3 չկա
1.3 Պետական գրանցման համարը		222.160.68143
1.4 Պետական գրանցման տարին, ամիսը, ամսաթիվը		2012-02-09
1.5 ՀՎՀՀ-ն		02605266
1.6 Հեռախոսը (այդ թվում՝ բջջային)		+(374)10606609
		+(374)98655601
1.7 Պաշտոնական ինտերնետային կայքը		advschool.am
1.8 Էլեկտրոնային փոստը		info@advschool.am
2. Հիմնադրի անուն, ազգանուն կամ անվանում՝		
3. Հոգաբարձուների խորհրդի անդամների անուն, ազգանուն՝		
4. Կառավարչի անուն, ազգանուն՝		
5. Աշխատակազմում ընդգրկված անձանց քանակը	16	
6. Անձեռնմխելի կապիտալի չափը	0	
7. Անձեռնմխելի կապիտալի կառավարումից ստացված եկամուտ	0	
8. Ֆինանսավորման աղբյուրները՝		
8.1 Ֆինանսավորումն ըստ խմբերի	8.2 Ծրագրի անվանումը	8.3 Չափը
8.1.1 Պետական և հայմայնքային բյուջեներից դրամական մուտքեր		
8.1.2 Իրավաբանական անձանցից դրամական մուտքեր		
	Ամերիկյան իրավաբանների ընկերակցություն	3114012
8.1.3 Ֆիզիկական անձանցից դրամական մուտքեր		
9. Հիմնադրի ներդրումը՝		

9.1 Դրամական միջոցներ	0	
9.2 Գույք	9.2.1 Տեսակը	9.2.2 Արժեքը
	0	0
10. Նվիրատվությունները/ նվիրաբերությունները		
10.1 Նվիրատուները/նվիրաբերողներն ըստ խմբերի՝	10.2 Նվիրված/նվիրաբերված գույք	
	10.2.1 Տեսակը	10.2.2 Արժեքը
10.1.1 Հայաստանի Հանրապետություն/համայնքներ		
10.1.2 Իրավաբանական անձինք		
10.1.3 Ֆիզիկական անձինք		
11. Իրականացված ծրագրերը՝		
11.1 Ծրագրի անվանումը	11.2 Ծախսված գումարը	
Հայաստանում կանանց իրավունքների պաշտպանությունը ընտանեկան բռնության շրջանակներում	3114012	
Փաստաբանների հավակնորդ ունկնդիրների ուսուցում, որակավորման քննությունների կազմակերպում, փաստաբանների վերապատրաստում	111909095	
12. Ֆինանսական տարում օգտագործված միջոցների ընդհանուր չափը	115023107	
13. Կանոնադրական նպատակների իրականացմանն ուղղված ծախսերի չափը	115023107	

Նշումներ՝

Կից ներկայացվում է աուդիտորական եզրակացությունը՝ 5 թերթից:
թերթերի քանակը

Հիմնադրամի տնօրեն _____
ստորագրությունը, անունը, ազգանունը

Digitally signed by KARAKHANYAN KRISTINE 5605770012

Գլխավոր հաշվապահ _____
ստորագրությունը, անունը, ազգանունը

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
« ՀԱՅԱՈՒԴԻՏ »
ՍՊԸ

REPUBLIC OF ARMENIA
" HAYAUDIT "
LLC

Երևան, Սուրբ Գ.Լուսավորչի 15/1
հեռ. (37410) 58-07-45
ֆաքս. (37410) 52-69-41
E-mail: hayaudit@mail.ru
URL: www.hayaudit.com

15/1 Surb G.Lusavorchi str.,Yerevan
tel. (37410) 58-07-45
fax (37410) 52-69-41
E-mail: hayaudit@mail.ru
URL: www.hayaudit.com

N Հ-04/20

«20» 03 2020թ.

ԱՆԿԱԽ ԱՈՒԴԻՏՈՐԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

« ՀՀ փաստաբանական դպրոց» հիմնադրամի հոգաբարձուների խորհրդին

Կարծիք

Մենք աուդիտի ենք ենթարկել Փաստաբանական դպրոց հիմնադրամի (այսուհետ՝ Կազմակերպություն) ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են 2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը, ինչպես նաև այդ ամսաթվին ավարտված տարվա համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվությունը, սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվությունը և դրամական հոսքերի մասին հաշվետվությունը, ինչպես նաև ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները, ներառյալ՝ հաշվապահական հաշվառման քաղաքականության նշանակալի մասերի վերաբերյալ համառոտագիրը:

Մեր կարծիքով, կից ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով ճշմարիտ են ներկայացնում (կամ տալիս են ճշմարիտ և իրական պատկերը) Կազմակերպության ֆինանսական վիճակը 2019 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ, ինչպես նաև այդ ամսաթվին ավարտված տարվա ֆինանսական արդյունքներն ու դրամական հոսքերը՝ համաձայն Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ-ներ):

Կարծիքի հիմք

Մենք Աուդիտն անցկացրել ենք Աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ-ներ) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը լրացուցիչ նկարագրված է այս եզրակացության «Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար» բաժնում: Մենք անկախ ենք Հիմնադրամից՝ համաձայն Հաշվապահների էթիկայի միջազգային ստանդարտների խորհրդի կողմից հրապարակած Պրոֆեսիոնալ հաշվապահի էթիկայի կանոնագրքի (ՀԷՄՍԽ կանոնագիրք) և Հայաստանի Հանրապետությունում ֆինանսական հաշվետվությունների աուդիտին վերաբերող էթիկայի պահանջների, և պահպանել ենք

էթիկայի հետ կապված մեր այլ պարտականությունները՝ համաձայն նշված պահանջների և ՀԷՄՍԽ կանոնագրքի:

Մենք համոզված ենք, որ մեր կողմից ձեռք բերված աուդիտորական ապացույցները բավարար և համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքն արտահայտելու համար:

Ղեկավարության և կառավարման օղակներում գտնվող անձանց պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար

Ղեկավարությունը պատասխանատու է ՖՀՄՍ-ների համաձայն ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ճշմարիտ ներկայացման, և այնպիսի ներքին հսկողության համար, որն ըստ ղեկավարության, անհրաժեշտ է խարդախության կամ սխալի հետևանքով էական խեղաթյուրումներից զերծ ֆինանսական հաշվետվությունների պատրաստումը ապահովելու համար:

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս՝ ղեկավարությունը պատասխանատու է Կազմակերպության անընդհատ գործելու կարողության գնահատման համար՝ անհրաժեշտության դեպքում բացահայտելով անընդհատությանը վերաբերող հարցերը, ինչպես նաև հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքը կիրառելու համար, եթե ղեկավարությունը չունի Ընկերությունը լուծարելու կամ Կազմակերպության գործունեությունը դադարեցնելու մտադրություն, կամ չունի այդպես չվարվելու որևէ իրատեսական այլընտրանք:

Կառավարման օղակներում գտնվող անձինք պատասխանատու են Կազմակերպության ֆինանսական հաշվետվողականության գործընթացի վերահսկման համար:

Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով զերծ են էական խեղաթյուրումներից, անկախ դրանց խարդախության կամ սխալի հետևանքով առաջացման հանգամանքից, և ներկայացնել մեր կարծիքը ներառող աուդիտորական եզրակացություն: Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է, բայց այն չի երաշխավորում, որ ԱՄՍ-ներին համապատասխան իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթյուրումը, երբ այն առկա է: Խեղաթյուրումները կարող են առաջանալ սխալի կամ խարդախության արդյունքում, և համարվում են էական, երբ խելամտորեն կարող է ակնկալվել, որ դրանք առանձին կամ միասին վերցրած, կազդեն օգտագործողների՝ այդ ֆինանսական հաշվետվությունների հիման վրա կայացվող տնտեսական որոշումների վրա:

Որպես ԱՄՍ-ներին համապատասխան աուդիտի մաս, աուդիտի ողջ ընթացքում մենք կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում մասնագիտական կասկածամտություն: Ի լրումն՝

- որոշակիացնում և գնահատում ենք խարդախության կամ սխալի պատճառով ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք աուդիտորական ընթացակարգեր՝ այդ ռիսկերին արձագանքելու նպատակով, և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավարար և

համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքի համար: Խարդախության պատճառով առաջացած էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկն ավելի բարձր է, քան սխալի պատճառով էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, զեղծարարություն, միտումնավոր բացթողումներ, սխալ ներկայացումներ կամ ներքին հսկողության չարաշահում.

• ձեռք ենք բերում պատկերացում աուդիտին վերաբերող ներքին հսկողության մասին՝ տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր նախագծելու, այլ ոչ թե Կազմակերպության ներքին հսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար.
• գնահատում ենք հաշվապահական հաշվառման կիրառված քաղաքականության տեղին լինելը, ինչպես նաև ղեկավարության կողմից կատարած հաշվապահական հաշվառման գնահատումների և համապատասխան բացահայտումների ողջամտությունը.
• եզրահանգում ենք ղեկավարության կողմից հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ, և հիմնվելով ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա՝ գնահատում ենք՝ արդյոք առկա է էական անորոշություն դեպքերի կամ իրավիճակների վերաբերյալ, որոնք կարող են նշանակալի կասկած հարուցել Կազմակերպության անընդհատ գործելու կարողության վրա: Եթե մենք եզրահանգում ենք, որ առկա է էական անորոշություն, ապա մեզանից պահանջվում է աուդիտորական եզրակացությունում ուշադրություն հրավիրել ֆինանսական հաշվետվություններին կից բացահայտումներին, կամ, եթե այդպիսի բացահայտումները բավարար չեն, ձևափոխել մեր կարծիքը: Մեր եզրահանգումները հիմնված են մինչև մեր եզրակացության ամսաթիվը ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա: Այնուամենայնիվ, ապագա դեպքերը կամ իրավիճակները կարող են ստիպել Կազմակերպությանը դադարեցնել անընդհատության հիմունքի կիրառումը.
• գնահատում ենք ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացումը, կառուցվածքը և բովանդակությունը, ներառյալ՝ բացահայտումները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած գործարքների ու դեպքերի ճշմարիտներկայացումը:

Ղեկավարությանը, ի թիվս այլ հարցերի, հաղորդակցում ենք աուդիտորական առաջադրանքի պլանավորված շրջանակի և ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված նշանակալի հարցերի, ներառյալ՝ ներքին հսկողությանը վերաբերող նշանակալի թերությունների մասին:

Տնօրեն Հայկ Վարդապետյան

Աուդիտոր Մարտին Ստեփանյան
Աուդիտորի վկայական № 027

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն

Հազար դրամ	Ծնթ.	2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Ակտիվներ			
Ոչ ընթացիկ ակտիվներ			
Հիմնական միջոցներ	4	10,402	28,593
Ոչ նյութական ակտիվներ	5	56,044	65,387
Այլ ոչ ընթացիկ ակտիվներ	6	4,481	5,082
		70,927	99,062
Ընթացիկ ակտիվներ			
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	8	1,335	1,497
Դրամական միջոցներ և համարժեքներ	9	52,262	22,760
		53,597	24,257
Ընդամենը ակտիվներ		124,524	123,319
Ոչ ընթացիկ պարտավորություններ			
Հետաձգված եկեմուտ	10	60,811	86,157
Հետաձգված հարկային պարտավորություններ	7.2	6,916	6,867
		67,727	90,024
Ընթացիկ պարտավորություններ			
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	12	53,522	45,995
Ընթացիկ շահութահարկի գծով պարտավորություն	7.3	4,176	1,784
Պահուստներ	11	6,314	5,905
		64,,012	53,684
Հիմնադրամին վերագրելի զուտ ակտիվներ		(7,215)	(23,389)
Ընդամենը զուտ ակտիվներ և պարտավորություններ		124,524	123,319

Տնօրեն
Սիմոն Բաբայան

Գլխավոր հաշվապահ
Դիանա Մկրտչյան

20 մարտի 2020թ.

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 5-ից մինչև 34-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ

Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն

Հազար դրամ	Ծնթ.	2019թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2018թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Եկամուտ գործառնական գործունեությունից	13	123,803	114,894
Եկամուտ դրամաշնորհային ծրագրերից	14	3,114	-
Եկամուտ ակտիվներին վերաբերող շնորհներից	10	25,346	25,381
		152,263	140,275
Աշխատանքների վարձատրության ծախսեր	16	(80,047)	(77,614)
Մաշվածություն և ամորտիզացիա		(29,907)	(30,241)
Ծրագրային ծախսեր	15	(3,114)	-
Աուդիտորական և խորհրդատվական ծախսեր		(3,165)	(3,321)
Գրասենյակային ծախսեր	17	(9,581)	(9,042)
Գործուղման և ներկայացուցչական ծախսեր		(3,683)	(2,314)
Այլ ծախսեր	18	(2,462)	(1,238)
Այլ եկամուտ	18	764	297
Գործառնական գործունեության արդյունք		21,068	16,802
Այլ ֆինանսական հոդվածներ			
Ֆինանսական եկամուտ		405	64
Այլ ֆինանսական հոդվածներ	19	(2)	(36)
Տարվա արդյունք մինչև հարկումը		21,471	16,830
Շահութահարկի գծով փոխհատուցում/(ծախս)	7.1	(5,297)	(2,792)
Տարվա արդյունք հարկումից հետո		16,174	14,038
Այլ համապարփակ ֆինանսական արդյունքներ			
Տարվա այլ համապարփակ ֆինանսական արդյունքներ հարկումից հետո		-	-
Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունքներ		16,174	14,038

Տնօրեն
Սիմոն Ռաֆայան

Գլխավոր հաշվապահ
Դիանա Մկրտչյան

20 մարտի 2020թ.

Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 5-ից մինչև 34-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Signer: ՀՀ ՊԵԿ
Date: 23.06.2020 13:02